Նախագիծ 54

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

.....2011 թվականի N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆԻ, ԱՐԾՎԱՆԻԿԻ, ՍԵՎԱՔԱՐԻ, ԱՃԱՆԱՆԻ, ՁԱՓՆԻԻ ԵՎ ՍՅՈՒՆԻՔ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՈՐՈՇ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԲԱՑԱՌԻԿ՝ ԳԵՐԱԿԱ ՀԱՆՐԱՅԻՆ ՇԱՀ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 218-րդ և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ և 76-րդ հոդվածի 5-րդ մասերի, <Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2–րդ մասի <զ> ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարանի պղինձմոլիբդենային հանքավայրի շահագործման ծրագիրը և բացահանքի ընդլայնման հեռանկարները՝ սույն որոշման 3-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերով սահմանված համայնքների, քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականությունը հանդիսացող հողերի նկատմամբ ճանաչել բացառիկ՝ գերակա հանրային շահ՝ հետևյալ հիմնավորումներով՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շահը գերակայում է օտարվող սեփականության սեփականատերերի շահերից, քանի որ՝

ա. ծրագիրն ընդերքօգտագործման բնագավառում ունի համապետական կարևոր նշանակություն,

բ. ծրագրի իրականացումը կապահովի Հայաստանի Հանրապետությունում արդյունաբերական արտադրանքի և արտահանման ծավալների էական աճ,

գ. ծրագրի իրականացումը մեծապես կնպաստի երկրի տնտեսական անվտանգության ամրապնդմանը,

դ. ծրագրի իրականացումը լուրջ խթան է տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման համար:

2) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի արդյունավետ իրագործումը չի կարող ապահովվել առանց նշված սեփականության օբյեկտների օտարման, քանի որ օտարվող սեփականության օբյեկտների տարածքներում և /կամ/ դրանց անմիջական հարևանությամբ գտնվող տարածքներում իրականացվելու է հանքավայրի շահագործման աշխատանքներ:

2.Սահմանել, որ՝

1) սույն որոշման 1-ին կետով սահմանված տարածքների ձեռքբերող է հանդիսանում <Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ> փակ բաժնետիրական ընկերությունը,

2) սեփականության օտարման գործառույթների իրականացումը համակարգող պետական լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարն է,

3) սեփականության օտարման գործընթացն սկսելու վերջնական ժամկետը 2012 թվականի հունվարի 1-ն է.

4) սույն որոշմամբ սահմանված ձեռքբերողի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են <Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա,

3. Սույն որոշման 1-ին կետի համաձայն՝

1) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ համայնքային սեփականության՝ 310.0հա, վարձակալությամբ տրամադրված՝ 27.0 հա հողերը համաձայն N1 հավելվածի, փոխադրել արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա:

2) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Արծվանիկ գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ համայնքային սեփականության՝ 113.65 հա և սեփական՝ 1917.3501 հա հողերը՝ համաձայն N2 հավելվածի, փոխադրել

արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա:

3) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սևաքար գյուղական համայնքի սահմաններում գտնվող՝ համայնքային սեփականության՝ 80.9 հա և սեփական՝ 10.585 հա հողերը՝ համաձայն N3 հավելվածի, փոխադրել արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա:

4) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Աճանան գյուղական համայնքի սահմաններում գտնվող՝ համայնքային սեփականության՝ 9.5 հա հողերը համաձայն N4 հավելվածի, փոխադրել արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա:

5) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Զափնի գյուղական համայնքի սահմաններում գտնվող՝ սեփական՝ 17.7 հա հողերը համաձայն N5 հավելվածի, փոխադրել արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա:

6) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սյունիք գյուղական համայնքի սահմաններում գտնվող՝ համայնքային սեփականության՝ 250.0 հա հողերը համաձայն N6 հավելվածի, փոխադրել արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա:

4. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուն հաջորդող 7-օրյա ժամկետում ապահովել օտարվող սեփականության սեփականատերերի և օտարվող սեփականության նկատմամբ պետական գրանցում ստացած գույքային իրավունքներ ունեցող անձանց իրազեկումը:

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 15-օրյա ժամկետում ապահովել սույն որոշմամբ սահմանված բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված տարածքների նկատմամբ սույն որոշումից բխող գույքային իրավունքների ու սահմանափակումների պետական գրանցումը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ու ժամկետներում՝ սույն որոշմամբ սահմանված տարածքները ձեռք բերողի սեփական միջոցների հաշվին:

3) սույն որոշման 3-րդ կետի 1-6-րդ ենթակետերի հանձայն փոխադրված՝ պետական սեփականություն հանդիսացող հողերը վարձակալության իրավունքով տրամադրել <Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ> փակ բաժնետիրական ընկերությանը.

4) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի գ.Քաջարան, Արծվանիկ, Սևաքար, Աճանան, Ձափնի և Սյունիք համայնքների ղեկավարների միջոցով ապահովել սույն որոշմամբ նպատակային նշանակությունը փոխված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վարձակալության իրավունքով տրամադրումը <Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ> փակ բաժնետիրական ընկերությանը.

5) երկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 218-րդ և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 104-րդ հոդվածներին համապատասխան՝ սույն որոշման 1-ին կետում նշված օտարման գոտում գտնվող հողամասերի սեփականատերերին սահմանված կարգով տեղեկացնել նշված հողամասերը պետության կարիքների համար օտարման գոտի հայտարարելու և նրանց հողամասերը հետ վերցնելու մասին ու ապահովել օտարման գոտու և դրա նկատմամբ իրավունքների սահմանափակումների պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում.

6) պետության կարիքների համար հետ վերցվող հողամասերի գների հատուցման վերաբերյալ սեփականատերերի հետ համաձայնություն ձեռք բերելուց հետո համապատասխան տեղեկատվությունը տրամադրել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը.

7) սույն որոշումն ուժի մեջ մտնելուն հաջորդող 7-օրյա ժամկետում ապահովել օտարվող սեփականության սեփականատերերի և օտարվող սեփականության նկատմամբ պետական գրանցում ստացած գույքային իրավունքներ ունեցող անձանց իրազեկումը:

5. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի

Հանրապետության Սյունիքի մարզպետին տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն և աջակցել սույն որոշման 4-րդ կետի 1-ին ենթակետի հանձնարարականի կատարումն ապահովելուն:

6. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետից տեղեկատվությունն ստանալուց հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել պետության կարիքների համար հետ վերցվող հողամասերի գների հատուցման ֆինանսավորման աղբյուրների վերաբերյալ առաջարկություն:

7. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետին համապատասխան՝ պետության կարիքների համար հետ վերցվող, ինչպես նաև հանքարդյունահանման համար անհրաժեշտ 2736.6851 հա հողամասերն ընդգրկվում են արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիայում:

8. Սույն որոշումից բխող՝ պետական գրանցում պահանջող ձևակերպումները ֆինանսավորվում են <Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ> փակ բաժնետիրական ընկերության կողմից:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

<Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան, Աճանան և Սյունիք համայնքների վարչական սահմաններում որոշ տարածքներում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու և հողերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

Անհրաժեշտությունը - <Զանգեզուրի պղինձ-մոլիբդենային կոմբինատ> փակ բաժնետիրական ընկերության կողմից ՀՀ Սյունիքի մարզի Քաջարանի պղինձ-մոլիբդենային հանքավայրի շահագործման ծրագրի և բացահանքի գործարկման հեռանկարների իրականացումն ապահովելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքի, Աճանան համայնքի և Սյունիք համայնքի վարչական և համայնքային սահմաններում գտնվող՝ ընդհանուր 2736.6851 հա մակերեսով, ճանաչել բացառիկ՝ գերակա հանրային շահ:

<Զանգեզուրի պղինձ-մոլիբդենային կոմբինատ> փակ բաժնետիրական ընկերության կողմից հանքավայրի շահագործման նախագծով նախատեսված սարդյունահանման ծավալների աճի դեպքում հանքաքարի վերամշակման արդյունքում ստացված ապրանքի իրացման ծավալները 90388 մլն. դրամից կհասնեն 102200 մլն. դրամի, վճարվելիք հարկերը և վճարները 21059մլն. դրամից՝ 28785 մլն. դրամի, աշխատողների թվաքանակը 3081 մարդուց՝ 3200 մարդ, ԱԱՀ-ն 4189մլն. դրամից՝ 6060 մլն. դրամի, շահութահարկը 7252 մլն. դրամից՝ 8550 մլն. դրամի:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները - <Զանգեզուրի պղինձ-մոլիբդենային կոմբինատ> փակ բաժնետիրական ընկերությանը հանքային իրավունքով տրամադրված ընդերքի տեղամասի օգտագործման համար առաջանում են բարդություններ այն պարագայում, երբ ընդերքօգտագործողին նախատեսված է ընդերքով զբաղեցված տվյալ հողամասի օգտագործումը, մինչդեռ հողային կադաստրի կամ քարտեզագրման տվյալներով դա նախատեսված չէ: Այդ հողամասերը օտարվում կամ տրամադրվում են երկարաժամկետ օգտագործման այլ անձանց, դրանով իսկ սահմանափակելով ընդերքօգտագործողի հնարավորությունը, օրենքով սահմանված կարգով դրանց օգտագործման վերցնելու և հանքային

իրավունքի տրամադրման հիմք հանդիսացող իր զարգացման ծրագրի իրագործման համար:

Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը – Հայաստանի Հանրապետությունում ընդերքօգտագործման ոլորտի կարգավորում:

Կարգավորման նպատակը և բնույթը - Նշված հողերի՝ գերակա հանրային շահ ճանաչելը պայմանավորված է այ հանգամանքով, որ ՀՀ Սյունիքի մարզի Քաջարանի պղինձմոլիբդենային հանքավայրի շահագործման ծրագիրն ընդերքօգտագործման բնագավառում ունի համապետական կարևոր նշանակություն, ծրագրի իրականացումը կապահովի հանրապետությունում արդյունաբերական արտադրանքի և արտահանման ամրապնդմանը, խթան կհանդիսանա տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման համար:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք - Իրավական ակտի նախագծումն իրականացվել է ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունում:

Ակնկալվող արդյունքը – Նախագծի իրագործման արդյունքում տարածաշրջանում կիրականացվեն ֆինանսական ներդրումներ, կավելանան պետական եկամուտները, կստեղծվեն աշխատատեղեր, տնտեսապես կզարգանա Սյունիքի մարզը: